ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

29. ԲՆԱԿԻՉՔ. ՀԱՅՔ. — Հայաստան աշխարհք՝ որ բազում հաւանութեամբ՝ երկիցս խանձարուրք եղեալ է մարդկութեան, յարարչագործութեան նորին և 'ի ջրծման 'ի ջրհեղեղէն, աներկբայապէս բնակեցաւ նախ յորդւոց և 'ի Թոռանց Նոյի ցեղապետի. և 'ի չուել մարդկանն 'ի Բաբելոն և յայլ կողմանս՝ կային յերկրի մերում տակաւին սերունդք նոցա. զորս ընդ իւրև նուաճեալ յապետոսեանն և Թորգոմածին Հայկն հսկայ՝ դարձ առնելով 'ի Բաբելոնէ, յիւր անուն և զերկիրն կոչեաց Հայք, յոր կոչեցան և այլ գաւառք շուրջ զԱրարատաւ, Տարօնով և Վասպուրականաւ և Սիւնեօք, յորս նախ սփռեցան սերունդք նորա. և առ փոքր փոքր՝ ամենայն աշխարհն՝ զորոյ սահմանս կարգեցաք 'ի սկզբանն. և 'ի մի ազգ ձուլեալ միացան և եզերական բնակիչքն Թորգոմազնեայք և ազքանազեանք և օտարք ոմանք սեմականք, որք վաղու եւս կալեալ էին զկողմանս բնակութեան իւրեանց, և տեղածինք կոչին. յորս գրելիք են Խաղտիք, Տայք, Գուգարք և Կորճայք և Ուտիք: Յաւուրս Արամայ Նահապետի որ 400 ամօք զկնի Հայկայ ընդարձակեաց զսահմանս պետութեանն, խառնեցան ընդ արևմտեայ Հայս Փռիւգացիք, Կապադովկացիք և այլք 'ի հնագոյն բնակչաց Փ. Ասիոյ. յետ այնորիկ 'ի ժամանակս Հայկազանց և Արշակունեաց՝ և այլ զանազան ազգք, է որ գերութեամբ, է որ կամովի գաղթելով, և է որ ապաստակաւ. 'ի սոցին սակի են նախ Սկիւթացիք կամ Խազիրքն հին՝ յարևելս հիւսիսոյ աշխարհին Հայոց, Մարք յարևելս հարաւոյ, ընդ որս և Քաղդեացիք 'ի Կորդուս, Ասորեստանեայք յԱղձնիս և յերկրին Արծրունեաց 'ի Վասպուրական, Ճենք՝ որ են Ուռպելեանք և Մամիկոնեանք 'ի Գուգարս և 'ի Տարօն. Հրեայք 'ի Սպեր, յորոց Բագրատունիք և Ամատունիք, և յայլ զանազան կողմանս. Քանանացիք յառաջ քան զնոսա, յորոց Գնթունիքն սերեցան. Պարթևք և Պահլաւք՝ յաւուրս Արշակունեաց, Հնդիկք 'ի կողմանս Տարօնոյ և Գնչուք. Բուլղարք 'ի կողմանս Վանանդայ. և Ալանք և Վիրք և Յոյնք, այլովք հանդերձ: Սոքա ամենեքեան Թէպէտ և բարուք և կրօնիւք զանազանեալք ոչ սակաւ ժամանակս, այլ տակաւ փոխեցան յօրէնս և 'ի լեզու հայկական և եղեն մի ազգ և մի լեզու. բայց տակաւին մնաց խոտր զանազանութեան 'ի բարբառս խօսից նոցին, որք Եզերական լեզուք (գաւառականք) կոչեցան 'ի նախնեաց մերոց մատենագրաց և Թուին վեց կամ եօթն. և ցարդ լսին այլաձայն բարբառք 'ի կողմանս Մոկաց, Գողթան և այլ ուրեք ուրեք, որք յարարատեան և 'ի Տարօնոյ բարբառոյ ոչ սակաւ զանազանին, այլ ոչ է ուրուք խնամով հետազօտեալ և նշանակեալ զայսպիսիս: Յայսքան ազգերաց գետացեալ ազգ Հայոց՝ ըստ օժանդակութեան արգաւանդահող երկրին և օդոց քաղցրութեան, երկրագործ և տնասէր բարուց մարդկան, և անաշխարհակալ պարապմանց Թագաւորաց երկրին՝ աճեաց յոյժ բազմամբերութեամբ. և որպէս յայտնէ է գուշակել և 'ի բազմութենէ տոհմից և պայազատութեանց, գաւառաց և վիճակաց, և անթիւ անուանց և նշանաց գիւղորէից և ագարակաց, հարկ էր իբրև զմի 'ի բազմամարդագոյն աշխարհաց Եւրոպիոյ լինել Հայաստանեայց յաւուրս հարստութեան բարեբաստիկ տեարց իւրոց: Բայց յետ տկարանալոյ և բառնալոյ տանն Արշակունեաց, 'ի սկզբանէ անտի Ե դարու սկսաւ նուազել Հայութիւն և բնակիչն աշխարհին, որ գաղթիւ և որ սպառմամբ սրոյ և պէսպէս վտանգաց. և ազգք եկամուտք սպրդեցան 'ի ներքս մի ըստ միոջէ, Պարսք, Յոյնք, Արաբացիք, Սկիւթացիք կամ Թուրքք, Թաթարք, Վիրք, Կովկասայինք, Ասորիք, և յետոյ Քուրդք, Օսմանեան Թուրքք, և աստ ուրեմն Ռուսք. և Թէպէտ այսքան ազանց սապնջական եղև Հայաստան կամաւ կամ ակամայ, այլ 'ի խուռն ապստամբ և յանդուլ պատերազմաց՝ նուազեաց ընդհանուր բնակութիւն երկրին, և Թերևս ոչ աւելի քան զհինգ միլիոն լիցեն այժմ 'ի նմա բնակիչք, և հնգիր մասամբ միայն բնիկք, այսինքն Հայք. քանզի մեծաթիւ մասն ազգիս արտաքոյ սեփական հայրենեացն գտանի, 'ի Փ. Ասիա և յամենայն Օսմանաստան և 'ի Ռուսաստան, և ցրիւ գրեաթէ ընդ ամենայն կողմանս երկրի. զորոց միահամուռ Թիւ՝ արտաքինք յ'2 միլիոն գումարեն, մերայինք յամաց հետէ 'ի չորս, իսկ ինձ հաւանագոյն Թուի միջինն չափ. ընդ ամենայն Ռուսաստան հաշուին Հայք ոչ աւելի քան զ'500,000, 'ի Պարսկաստան իբրև 100,000, յԱւստրիա 18,000, յԱփրիկէ 5,000իւ չափ, ոչ աւելի և 'ի Հնդիկս. իսկ յայլ ամենայն կողմանս Եւրոպիոյ և ոչ հազար մի. բայց միայն յօսմանեանն Եւրոպա 400,000իւ չափ. իսկ այլ ամենայն հայօրեար տարածեալ է 'ի Մեծ և 'ի Փոքր Հայս, և յամենայն փոքր Ասիա, 'ի Միջագետս և յԱսորիս, և սակաւք սփռեալք 'ի խորին աշխարհս Ասիոյ: Խտագոյն բնակութիւն Հայոց 'ի բուն Հայս ծանուցեալ է յԵրևանեան նահանգի, 'ի Մուշ, 'ի Վան, 'ի Կարին, յԵզնկա, 'ի Խարբերդ, յԱլաշկերտու կողմանս. իսկ արտաքոյ 'ի կողմանս Կեսարիոյ, Արաբկերու, Տիվրիկու, Անթապու, 'ի Կոստանդնուպօլիս, 'ի Տփխիս. և այլ ուրեք ուրեք:

30. ՕՏԱՐ ԲՆԱԿԻՉՔ. — Երկրորդ ազգ յետ Հայոց և բազմաթիւ քան զնոսա և քան զայլսն են Քուրդք բազմատոհմք, իբրև միլիոն և կէս, սերունդք Կորդուաց նախնեաց և Քաղդէացւոց և խառնուրդ անծանօթ. կէսք հնազանդք Օսմանեանց և Պարսից, և այլք ինքնագլուխ իշխանօք վարեալք, շինաբնակք և վրանաշրջիկք. կրօնիւք մահմետական, լեզուաւ՝ մերձաւորք պարսկայնոյն: — Գ. Ժողովուրդ Թուրքք և Թուրքմանք և Թէրէքէմէ. ընդ որս Դ. Օսմանեանք,